ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՏՅՈՊԱ ԵՎ ԱԼՄԱՍՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 344-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունել «Քաղաքացիներ Ստյոպա և Ալմաստ Հարությունյանների դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը՝ հետևյալ հիմնավորումներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը սույն գործով դիմողների նկատմամբ չի կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Սույն գործով խնդրո առարկա դրույթի վիճարկումը չի բխում սահմանադրական կոնկրետ վերահսկողության էությունից, որտեղ էականն անձի սահմանադրական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է, որոնք **խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում ենթադրյալ հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում**: Դիմողների կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դատական ակտերում սույն գործով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի վերաբերյալ որևէ հիշատակում չկա, կիրառում առկա չէ: Սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն առավելապես հետապնդել են վերացական վերահսկողությանը բնորոշ նպատակներ:

Բացի դրանից, դիմողները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթին, ըստ էության, անդրադարձել են համակարգային վերլուծության արդյունքում և չեն

հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով« Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

«Քաղաքացիներ Ստյոպա և Ալմաստ Հարությունյանների դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 հունվարի 2013 թվականի
ՍԴԱՈ-8